ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 609 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2323-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, N 1 հավելվածի N 3 աղյուսակում լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող

միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9 հավելվածների:

2. Թույլատրել՝

1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմին «ԱՐՄՍՏՐՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2023 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված N ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-23/01 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված՝ Սևքար և Աչաջուր համայնքներից-Ֆիդայինների հովիտ-Աղբղա-Հ-26 հանրապետական նշանակության ավտոճանապարհի հատում ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների կատարման համար կնքել համաձայնագիր.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին «ԹԻՎ 28 ՇՄՇ» բաց բաժնետիրական ընկերության հետ 2023 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N ԳՄ ՀԲՄԽԾՁԲ-2023/01 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ախպրաձոր բնակավայրի Ալպյան մարգագետիններ տանող գրունտային ճանապարհների կառուցման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների կատարման համար կնքել համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ